№ 101 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 14 ՄԱՅԻՍԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԱՄԱՅՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 14 ՄԱՅԻՍԻ № 101

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ՍՄՆ ՏԵՂ. 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Բայտարարութիւն ընդունվում է ամէն ժամի

Բայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Բայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 7 ՐՈՒԲԼԻ

Ժամանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակատրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների իրենց դիմումները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿՐ ԹՈՂՆՎԻՆ ԱՆՀԵՏԱՔՐՔԻՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան բաժանորդները, որոնք 1915 թ. ընթացքում լրիւ վճարած կունենան 10 թ. բաժանորդավճարը, կը ստանան որպէս պրեմիա հետեւեալ հոգի լոյս տեսնելիք գրքերը. 1) «Ծանրվածը»—մեծ վէպ Շահրիարի հայի յեղափոխ. կեանքից, 2) «Հայկական հարցը»—լուսաբանված զօհումենտներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Մարթամ Մովսէսեան և իր զաւակները՝ Սարգիս, Ռուբէն, Փեփրոնիա, Հռիփսիմէ և Հեղինէ ՍԱԿԱՉԵԱՆՑՆԵՐԸ ցաւօք սրտի յայտնում են ազգականներին ու ծանօթներին՝ առաջինին իր թանգագին մասնաւոր, իսկ միւսներն իրանց սիրելի հօր՝

Կարապետ Սարգսեան ՍԱԿԱՉԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ մայիսի 10-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ։ Ամփիոքը այսօր, մայիսի 14-ին, երեկ. ժամը 7-ին Մարմնի յուղարկաւորութիւնը ուրբաթ, մայիսի 15-ին, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Սօլօլակսկայա փող. № 3) դէպի Զգրաշէնի եկեղեցին Թաղումը Յօհաննէսի գերեզմանատանը։ Խնդրվում է պատիւներ չը տալու։ 301. 3—3

Մ արգարիտ և Արշակ ՄԵԼԻՔ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՆԵՐԸ ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինին իր անմոռանալի հօր, իսկ երկրորդն իր սիրելի հօրեղբօր՝

Կարապետ Սարգսեան ՍԱԿԱՉԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ մայիսի 10-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ։ Ամփիոքը այսօր, մայիսի 14-ին, երեկ. ժամը 7-ին։ Մարմնի յուղարկաւորութիւնը ուրբաթ, մայիսի 15-ին, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Սօլօլակսկայա փող. № 3) դէպի Զգրաշէնի եկեղեցին Թաղումը Յօհաննէսի գերեզմանատանը։ Խնդրում ենք պատիւներ չը տալու։ 302. 3—3

«ՄՇԱԿԻ» ՓՐԱՍՆԵՆԱԿՈՒՄ ԾԱԽՎՈՒՄ Է
Ա. ՔԱԼԱՆԹԱՐԻ կազմած
ՍԱՍՈՒՆԻ ՔԱՐՏԷԶԸ
փոքրագիր։ Հատը 5 կոպէկ։ Ձանապարհածախքով հատը 8 կ.։ Թումարով գնողների զեղչ։

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ
ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ
Մասնակցութեամբ տիկ. ՍԻՐԱՆՈՑՇԻ
կը ներկայացնէ

Շաբաթ երեկոյ, մայիսի 20-ին — **ՀԱՄԼԷՏ**
Կիրակի երեկոյ, մայիսի 21-ին — **ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ**
Ուրբաթ, մայիսի 22-ին — **ՄԷԴԷԱ**

Պատրաստւում են յատուկ զգեստներ և դեկօրացիաներ առաջին անգամ հայ բեմի վրա ներկայացնելու Շէքսպիր Գօ-ն էմի, արարների կանաչից՝ **„ԱՆԹԱՐ"** պիէսը, որ քնագրից թարգմանել է պ. Վրթանէս Փափազեանը։

Կիրակի, մայիսի 24-ին վերջին ներկայացում։ Կը ներկայացվի **„ՕՐԼԷԱՆԻ ԿՈՒՅՍ"**

Ներկայացումներին կը մասնակցեն՝ (այբուբենական կարգով) տ. տ. Աշխէն, Զաբէլ, Մանուէլեան, Մայսուրեան, Ցատիկ, ՍԻՐԱՆՈՑՇ Սեւումեան, պ. պ. Ալիխանեան Խ., Ազեան, Ալմազովեան, Բաբեան, Գրիգ-Փիգարեան, Մանուէլեան, Մելքոնեան, Մուրատեան, Մելքոնեան, Ասրէն, Փափազեան, Սեւումեան և ուրիշներ։

Տեղերի գնորը սովորական են։ — Սկիզբը ճիշդ ժամը 8-ին։

Յայտարարված ներկայացումների տոմսակները վաճառվում են թատրոնի կասսայում։

Ցուշարար՝ ՉԱՐՉԱՐԵԱՆ (ա. օ.) առ.

Բեմիսեար՝ ՍԵԻՒՈՒՄԵԱՆ 304. 4—1

ՎԱՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչեվսկայա 13, տէլէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ընտիր, նոյնպէս և վիրաբուժարանում կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) ցաղօրօք դրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։

Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութիւնեան
Ե. Ն. Վեսելօ Լզօրով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նօվիցկիյ
Գ. Ե. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Գ. Շահպարոնեանց
(հ.կ.) առ 970. 100—54

ԲԺԻՇԿ ՊԵՏ
Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկ. օրդինատ. Մօսկվայի համալսարանի և ասսիստ. պրօֆ. Պօզնէրի։

Նախկին տարիների նման կընդունէ հիւանդներին մայիսի 1-ից Կովկասի հանքային Ջրերում՝ Պեատիգօրսկում, Ելիզավետինսկայա փողոց, տան Արիսթօվի, ռուսաց սօճորի դիմաց, տէլէֆ. № 276։

առ. (հ. հ. կ.) 248. 30—9

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նաբարեան
(Մանուպէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)։

Ընդունում է հիւանդներին՝ (առ. ժ. 12½—2. (եր. ժ. 4—6.

Հասցէն՝ Սօլօլակ, Ռտիշչեվսկայա փ. № 1 Հեռախօս 10—58.

(հ.հ.կ.) առ. 784. 100—98

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(ԶՈՒՄԱԼՕՓԻ ԱՆՈՒՆԱՆ)

Այսօր, հինգշաբթի, մայիսի 14-ին
ՀԱՑԿ. ԴՐԱՄ. ԽՄԲԱԿԱ.
կը ներկայացնէ

Վանիկլիհի զաւակները
Դրամա 4 գործ. հեղ. Նայդենօվի

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ.—օր. օր. Արծրիկ, Արփենիկ, Քօչարեան, Թօրթեն, տ. տ. Աբգիեան, Աբգիեան-Ցիցիանօվա, Մանուչարեան, Ցատիկ, Պալեան, պ. պ. Աղաբաբեան, Գալըստեան, Գաւրօշ, Երամեան, Ղազչեան և ուրիշ։

Սկիզբը երեկ. ճիշդ ժամը 8-ին։

Բեմիսեար՝ ԱՄՕ-ԽԱՐԱՉԵԱՆ

Վարչութեան հերթապահ անդամներ՝
Տիկ. Վ. ՄԱՄՈՒԼԵԱՆ պ. Ե. ԽԱՐԱՉԵԱՆ
առ. 310. 1—1

ԻՏԱԼԻԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՂ

Մեր նախորդ յօդուածով (տես № 97) մենք ասացինք, թէ ոչ մի կասկած չը կայ, որ իտալական պարլամենտը իր լիակատար հաւանութիւնը տուեց Սալանդրա-Սօնինօյի կաբինետի քաղաքականութեան և Իտալիան պատերազմ յայտարարեց Աւստրիային։

Յայտարարելով պատերազմ Աւստրիային, Իտալիան յարած է լինում երրեակ համաձայնութեան, հետեւաբար՝ նա պատերազմ է յայտարարում կողմնակի կերպով նաև Գերմանիային ու Թիւրքիային։

Անցեալ անգամ մենք չը յիշնցինք և մի կարեւոր հանգամանք, որ մեծ դեր է խաղում իտալական ժողովրդի զգացումների և ոգևորութեան մէջ։ Իտալիան պատկանում է լատինական ազգերի շարքին, և իտալական ժողովուրդը միշտ իրան զօրված է համարել Ֆրանսիայի և Ֆրանսիական ազգի հետ եղբայրական շաղկապներով։ Իտալիայի դաշնակցութիւնը Աւստրիայի և Գերմանիայի հետ՝ բնաւ համակրութիւն չէ վայելել իտալական ժողովրդի մէջ, և նա համարել է այդ դաշնակցութիւնը անբնական, որովհետև այդ դաշնակցութեամբ Իտալիան բնաւ չէր կարող իրագործել իր ազգային իդէալները, այն է իտալական ազգի և իտալական երկիրների միացումը։

Ներկայ պատերազմով Իտալիան ձգտում է իրագործել մեծ հայրենասէր Գարիբալդիի և նրա հետեւողների բաղձանքը՝ տեսնել մի մեծ, միացեալ Իտալիա։ Եթէ Իտալիան յաղթական դուրս գայ ներկայ պատերազմից, նա կը ստանայ Տրիէստը, Տրենտինան, Ալբանիայի մի մասը և կամքայնացնի իր հողային և ազգային միութիւնը։

Սակայն չը պէտք է մոռանալ, որ յաղթութիւնը կարող է դժուարութեամբ ձեռք բերվել, և նրա այժմ կատարած հայրենասիրական քայլը բաւական բիւրատ քայլ է և, ինչպէս ճիշդ նկատում է «Рус. Вѣд.» թերթը, պատերազմը հեշտ չի լինի նրա համար, որովհետև Աւստրիան անմիջապէս սահմանակից է և մեծ դիւրութիւններ ունի խոչընդոտելու Իտալիայի ներքոյ։ Եւ հէնց այդ պատճառով Իտալիայի մինիստրութիւնը յօդուտ երբեակ համաձայնութեան՝ մի ազնիւ և անձնազոհ քայլ է, որ, անշուշտ, կը գնահատվի Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի կողմից, ինչպէս և ամբողջ քաղաքակրթութեան կողմից, որովհետև Իտալիան ևս կանգնում է այն ազգերի շարքում, որոնք կամենում են թօթափել տեւտօնական միլիտարիզմի լուծը և այժր։

Հայ ժողովուրդն ևս իր եղբայրական և համակրական ողջոյնն է ուղարկում, անշուշտ, Իտալիային, որի ծոցում ապաստանել են հայ զրական գործիչներ՝ Մխիթարեանները և որը միշտ համակրութեամբ է վերաբերվել դէպի թշուառ թիւրքահայի դատը և ազատագրութեան գործը։ Հնուէն էլ Իտալիան կապված է եղել պատմական կապերով Հայաստանի հետ։

Հ. Ա.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ
ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ
(Պետ. Հեռ. Գործ.)
12 մայիսի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Մայիսի 10-ին ծովամերձ ուղղութեամբ սովորական հրացանաձգութիւն էր։

Սարըկամըշի ուղղութեամբ՝ Կղզի-Դերբէնդ լեռնանցքի շրջանում թիւրքերը փորձեցին յարձակման դիմել, բայց պիրուցան եղան դէպի արևմուտք։

Մնացած ուղղութեամբ փոփոխութիւն չը կայ։

13 մայիսի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Մայիսի 11-ին ծովամերձ ուղղութեամբ տեղի ունեցաւ սովորական հրացանաձգութիւն։

Թիւրքերի փորձերը՝ դիմել յարձակման Կարաղերբենտի լեռնանցքի շրջանում, յետ կասեցվեցին մեր զօրքերի կողմից։ Կուի ժամանակ մեր կօզակային գնդերից երկու հարիւրեակ հեծելազօր յարձակում գործեց թիւրքերի վրա և սրի ենթակացրեց նրանցից երկու վաշտ։

Մեր զօրքերը գրաւեցին Միանդուաբը։

Միւս ուղղութիւնների վրա գրութիւնը անփոփոխ է։

ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐԳԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
12 մայիսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Վերջին ամբողջ ամսվայ ընթացքում Հայաստանում տեղի է ունենում հայերի կոտորած քիւրդերի և թիւրքերի ձեռքով՝ օսմանեան իշխանութիւնների բացարձակ անտեսութեամբ ու երբեմն նրանց ուղղակի աջակցութեամբ։

Նոր տոմարի ապրիլի կէսին հայերի կոտորած եղաւ Էրզրումում, Բէրդունում, Ակնում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Չէյթունում և ամբողջ Կիլիկիայում։ Գլխովին սրի են քաշված Վանի շրջակայքում հարիւրաւոր գիւղերի բնակիչները։ Վանի մէջ հայական թաղը պաշարված է քիւրդերով։

Միևնոյն ժամանակ կ. Պոլսում թիւրքաց կառավարութիւնը կալանաւորում և անտեսի նեղութիւնների է ենթարկում հայ խաղաղ ազգաբնակութեան։

Ի նկատի ունենալով այդ նոր ոճիրները, որ գործում է Թիւրքիան մարդկութեան ու քաղաքակրթութեան դէմ, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնակից կառավարութիւնները հրապարակով յայտարարում են Բ. Դրան, որ նրանք այդ ոճիրների անձնական պատասխանատուութիւնը դնում են թիւրքաց կառավարութեան բոլոր անդամների վրա և նրա տեղական իշխանութիւնների այն ներկայացուցիչների վրա, որոնք կատարած կլինեն մեղսակից կերպով։

ՎԱՆԻ ԳՐԱԻՄԱՆ ԱՒԻՇՈՎ

Վանի գրաւման առիթով Թիֆլիսի առաջնորդ Մեսրոպ եպ-ի խոսած հետաքրքրական խօսքերն ի պատասխան ստացվել են հետեւեալ հեռագրերը։

I

Նորին բարձր սրբազնութիւն Մեսրոպ եպիսկոպոսին.

Զգացված եմ և սրտագին շնորհակալ եմ ձեր արտայայտած զգացումների համար։

Գեներալ-ադիւտանտ ՆԻԿՕԼԱԻ

II

Մեսրոպ եպիսկոպոսին.

Ի սրտէ շնորհակալ եմ ձերդ բարձր սրբազնութեանը՝ ձեր աղօթքների և բարեմաղթութիւնների առիթով՝ մեր զօրքի յաղթութեան համար՝ ընդդէմ մեր պատմական թշնամուս։

Իւդենիչ

III

Մեսրոպ եպիսկոպոսին.

Ի սրտէ շնորհակալ եմ, ձերդ բարձր սրբազնութիւն, շնորհաւորանքի և աղօթքների առիթով՝ Վան քաղաքի ազատութեան համար՝ քրիստոնէութեան պատմական թշնամուց, շնորհիւ լինէ յանձնված զօրաբանակի կորիճ և փառաւոր զօրամասերի և հայ կամաւորների։

Գեներալ Օգանովսկի

Մեսրոպ եպ-ի ուղարկած հեռագրերը

I

Նորին Գայսերական Բարձրութիւն Գերագոյն Զօրահրամանատարին.

Գտնարելով այսօր հանդիսաւոր գոհաբանական մաղթանք, Վան քաղաքի՝ մեր հերոսական զօրքերի զրաւման առիթով, որպիսի գրաւումը վերջ դրեց Վանի վիլայէթի հայ ազգաբնակութեան անթեւելի տանջանքներին, ես իմ հօտի կողմից, որ խորապէս երախտապարտ է հայերի մշտական հովանաւորին Արեւելքում, ամենաանձնուիրաբար մատուցանում եմ Ձեր Կայսերական Բարձրութեանը անսահման ուրախութեան և երախտագիտութեան ջերմ զգացումներ մեր պատառանդ ազատարար զօրքի յաղթական երթի առթիւ, և հօտիս հետ միասին վերառաքում եմ Բարձրեալին ջերմ աղօթք՝ լիակատար յաղթութեան մասին մեր մեծ հայրենիք Ռուսաստանի համար։

II

Նորին Գայծառափայլութիւն Փոխարքային Նորին Մեծութեան.

Վան քաղաքը վերցված է մեր հերոսական զօրքերով։ Ամբողջ վիլայէթի հայ ազգաբնակութեան դարաւոր տանջանքները վախճան գտան։ Այժմ իսկ իմ կատարած գոհաբանական մաղթանքին հաւաքված իմ հօտը ինձ հետ միասին վերառաքում է Բարձրեալին ջերմ աղօթք՝ ուղարկելու մեր փառապանծ զօրքին շուտափոյթ կատարել յաղթութիւն թանգագին հայրենիք Ռուսաստանի բոլոր թշնամիների դէմ, Ռուսաստանի՝ որ հայերի հովանաւորն է Արեւելքում։ Իմ և հօտիս անունից մատուցանում եմ Ձեր Գայծառափայլութեանը անսահման երախտագիտութեան անկեղծ զգացումներ՝ Ձեր այդքան պատմական ուշադրութեան համար դէպի հայ ժողովրդի տանջանքները։

III

Նորին Բարձր Գերազանցութիւն՝ Կովկասեան բանակի հրամանատար գեներալ Իւդենիչին։

Իմ հօտը, որ Վան քաղաքի գրաւման առիթով կայացած գոհաբանական մաղթանքին ներկայ էր, վերառաքում է ինձ հետ միասին առ Բարձրեալն ջերմ աղօթքներ՝ Ձեր զօրքի համար պարգեւելու յաղթութիւններ Արեւելքի պատմական թշնամու դէմ, և մատուցում է Ձեր Բարձր Գերազանցութեանն անկեղծ շնորհակալութեան ջերմ զգացումներ՝ Ձեր անփոխարէն բարեացակամ վերաբերմունքի համար դէպի բազմաչարչար ժողովուրդը, որ աղօթքներ վերառաքած հետեւում է քաջարի զօրքի յաղթական երթին։

IV

Նորին Գերազանցութիւն գեներալ Օգանովսկիին.

Հայ ժողովրդի կողմից սրտատրոփ սպասվող բերկրալի լուրը Վան քաղաքի ազատման մասին՝ Ձերդ Բարձր Գերազանցութեան խնամատարի առաջ

ՄԱՐՏԻՐՈՍԻ ՀԻՇԱՏԱԿԸ

Ամեն տարի մայիսի 14-ին ամբողջ աշխարհում նշվում է Մարտիրոսի հիշատակը։ Մարտիրոսը ծնվել է 1890 թ. Ղարաբաղի Ջրաբերդ գավառի Ծղուկ գյուղում։ Նա ուսանել է Շուշիի ռեալական դպրոցում։ Ուսման տարիներին նա ակտիվ մասնակցություն է ունեցել հեղափոխական շարժմանը։ Ռեալական դպրոցն ավարտելուց հետո նա մեկնել է Ռուսաստան, որտեղ ընդունվել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը։ Այստեղ նա ծանոթացել է մարքսիզմի հիմնադիր Վ. Ի. Լենինի գաղափարներին և դարձել նրա հետևորդը։ Համալսարանն ավարտելուց հետո Մարտիրոսը վերադարձել է Ղարաբաղ և աշխատել որպես փաստաբան։ Նա ակտիվ մասնակցություն է ունեցել 1917 թ. Փետրվարյան հեղափոխությանը։ Հեղափոխության հաղթանակից հետո Մարտիրոսը ընտրվել է Ղարաբաղի ժողովրդական խորհրդի նախագահ։ Նա մեծ ջանքեր է գործադրել Ղարաբաղում խորհրդային իշխանություն հաստատելու համար։ Ղարաբաղի ժողովրդական խորհրդի նախագահ Մարտիրոսը ղեկավարել է Ղարաբաղի հայ ժողովրդի ազատագրական պայքարը։ Նա

ՀԱՅՈՑ ՎԱՐՉԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

(Մեր Յատ. Թղթ.)

13 մարտ

ՓԱՐԻԶ.—Ֆիլիկիոյ տարեդարձն էր, որ պատճառ եղաւ Հայոց Կաթողիկոսի եւ յատուկ պատուիրակի մը ներկայութեան։

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գէորգ Ե. Սուրէնեան Հայրապետ, Ամենայն Հայոց Կաթողիկոսական Պատուիրակ Տ. Տ. Յովհաննէս Արք. Թէրզեան, Ազգային Ներկայացուցիչ Տ. Տ. Գրիգոր Վրդ. Զօհրապ եւ Տ. Տ. Գրիգոր Վրդ. Պետրոսեան, Ազգային Ներկայացուցչական Մարմնոյ Անդամ Տ. Տ. Գրիգոր Վրդ. Տէր-Յարութիւն

Իրաւաբանական տեսակէտից, է հարկէ, նրանք կարող են դպրոցից զուրս գօրծ չը կատարել և մենք էլ ոչինչ չենք ունենայ դրա դէմ։

Եւ մենք միայն կարող ենք յիշեցնել մեր ուսուցիչներին իրանց բարոյական պարտքը։

Խանք հնդ Ա. Ալանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Այսօր, հինգշաբթի, ամսիս 14-ին, Թագաւոր Կայսրը Նիկոլայ Ալէքսանդրովիչի և Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեօդօրօվնայի Թագադրութեան օրը քաղաքի բոլոր հիմնարկութիւնները փակ կը լինեն։ Գօստը բաց կը լինի մինչև ժամը 10-ը։

◆ Ոստիկանապետը արձանագրութիւն է կազմել Թիֆլիսի առաջին կարգի վաճառական Սէյլանեանի վրա նրա համար, որովհետև սա 2000 պուդ շաքար ուրիշ տեղ պահած՝ մասամբ վաճառում էր թանգ գնով։ Շաքարը գրաւեց ոստիկանութիւնը և վաճառեց։

◆ Թիֆլիսի պօլիտեխնիկական ինստիտուտը կառուցող տեխնիկական յանձնաժողովի նախագահ ինժ. Լ. Ի. Ղաւլեան հեռագրում է Պետրօգրադից, օր անհրաժեշտ է շարունակել պօլիտեխնիկումի հողային աշխատանքները և խնդրում է իր ընկերակիցներին շուտով աւարտել նախահաշիվ կազմութիւնը։ Վերադարձին Լ. Ղաւլեան Մօսկվայում և Նովօչերկասկում ծանօթանալու է պօլիտեխնիկական ինստիտուտների գիւղատնտեսական բաժանմունքների հետ։

◆ Հաւլաբարի գործիչները և մի խումբ իրաւաբանները մայիսի 10-ին ունեցած իրանց խորհրդակցութեան մէջ միաձայն որոշել են ծիցիանովսկի վերելքից մինչև Կախետինսկայա հրապարակը նոր փողոց անց կացնել, վերացնելով դրա հետ միաժամանակ մի քանի անշուք կայքեր ու տներ, որոնք կը խանգարեն ծրագրի իրագործմանը։ Խորհրդակցութեանը ներկայ եղող տնատէրերը լիակատար համաձայնութիւն տուին կամաւոր կերպով վերցնել շէնքերի մասերը նոր փողոցի համար։

◆ Երէկ Սարբլամբոյից տանիտարական № 4 գնացքով Թիֆլիս բերվեցին 225 հիւանդ զինուոր և 2 օֆիցէր, որոնցից Նաւթլուղի դաստուրող հիւանդանոցում ընդունվեցին 39 հոգի. դրանց մէջ կան հետեւեալ 9 հոգիները. 1) Թումանեան Արշակ (դեղեցիկ), 2) Աղջայեան Գրիգոր (արագեալցի), 3) Սիմէօնեան Հայկ (հախվերանցի), 4) Գալուստեան Յովսէփ (ալէքսեեցի), 5) Սարգսեան Գարեգին (էջմիածնեցի), 6) Ղազարեան Սողոմոն (Ջաճուկեցի), 7) Տէր-Գրիգորեան Յովսէփ (էլտիացի), Բարամեան Նիկողայոս (քաղանխեցի) և 9) Ղուկասեան Ալեքսէյ (միձեցի)։

◆ Փակվեց հայ-վրաստանցիների երեխաների համար բացված դպրոցը՝ համայնան դպրոցին կից։

◆ Քաղ. վարչութիւնը դումայի առաջիկայ նիստի քննութեանն է ներկայացնելու քաղաքային ընտրողների թիւի մասին նախնական տեղեկութիւնները՝ ընտրական հարցը լուծելու համար, թէ իրաւասութիւնների ընդարձակութիւնը կատարել մի քանի մի քանի ընտրական կէտերում։

◆ Քաղաքի գնած ալիւրը Բօստովից արդէն սաստկում է մասամբ։ Ինչպէս ասում են, իւրաքանչիւր օր սաստկելու է մի քանի վագօնս։

◆ Քաղաքագլուխ Ալ. Խատիսեան դիմել է Համառուսական Քաղաքների Միութեան գլխաւոր վարչը Մ. Վ. Չելնօկովին, խնդրելով միջնորդել բարձր իշխանութեան առաջ, որ շուտափոյթ քաղաքին տրվի 148,000 ր. սուբ-վարկիչ հիւանդութիւնների դէմ կուռելու համար։

◆ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Ն. Ֆ. Բունտովի պաշտօնական գործերով մեկնեց Հիւսիսային Կովկաս։

◆ Ստացանք՝ 1) Կովկասի քաղաքների միութեան գործունէութեան համառօտ հաշիւը, որը վերաբերում է այս թուի փետրվար և մարտ ամիսներին. 2) Վ. Ե. Թայրեանի խմբագրութեամբ Օդեսայում լոյս տեսնող «Вѣстникъ Винодѣлія» ամսաթերթի № 3—4-ը. 3) «Թատրօն և երաժշտութիւն» հանդէսի այս տարվայ մայիս-յունիս՝ № 6—7-ը։ Թերթը կազմված է բաւական հետաքրքրական։ Կան մի շարք յօդուածներ նուաիրված Մակար Եկմալեանի յիշատակին։ կան մի շարք պատկերներ։ Տպված է և Պետ. Ադամեանի մի նամակը. 4) «Բոյզիը» Մ. Վ. Մաքսուտեանի, ինքնուրոյն և թարգմանական բանաստեղծութիւնների ժողովածու, էջ 86, գինն է 80 կ.։

◆ Յովսէփ Ք. Տէր-Պետրոսեանը և Վ. Դ. Մամուլեանը ծախում տարան Կովկասեան գործող բանակը՝ զինուորներին ծխախոտ մատակարարող կոմիսիայի կողմից. առաջինը՝ Սարըկամըշի կողմը, իսկ երկրորդը՝ Անդրկովկասեան շրջանը։

◆ Քաղաքային գիշերային առաջին պատասխանում անցեալ ապրիլ ամսում գիշերել են 159 հոգի, որոնցից 3-ը կանայք են։ Նրանք ըստ ազգութեան բաժանվում են հետեւեալ կերպով. ուսներ 33 տղամարդ, հայեր 97 տղ. և 3 կին, վրացիներ 21 տղ., լեհեր 2 տղ., օսեր 1 տղ., թուրքը 1 տղ. և սասքի 1 տղ.։

—

ԿՈՎԿԱՍ

◆ Կարսի գծի Այրում կայարանից մեզ գրում են. «Անցեալ օրը կալուածատէր Ա. յամեանի անասնապահներից մեկը, «Գուգուզաթ» կոչված սարում, հրացանի զարկով ապտրեց լուրջ կերպով վիրաւորել է մօտակայ Շնող գիւղացի Ս. Մկրտումեանին, որը ուղարկվեց Թիֆլիս բժշկութեանդ։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Մայիսի 10-ին խուզարկու բաժանմունքի պաշտօնեաները ձերբակալեցին դաւալիք վինուօր Արաքէմ Զարխչեանին, որը ուղարկվեց Թիֆլիսի գաւառի վինուօրական կառավարչի մօտ։

◆ Մայիսի 8-ին, Ալէքսանդրոպոլի բերնակչուհի Հերիքնազ Բօստանջեան յայտնեց խուզարկու ոստիկանութեան, որ իր որդին, որին ինքը տուել էր առևտրական բանկը տանելու համար 1100 րուբլի, յիշեալ գումարը վերցնելով անյայտացել է։ Նրա հետ միաժամանակ անյայտացել և տ. Բօստանջեանի խանութում գանձապահի պաշտօն կատարող օրիորդ Ֆէօդօսիա Լեշչենկօն։

Ամբաղիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՍԱԿԱԳԻՆ

ԶԱՆԱԶԱՆ ՄԹԵՐԻՆԵՐԻ ԵՒ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԹԻՖԼԻՍ ՔԱՂԱՔՈՒՄ

(Մայիսից 2-ից մինչև 19-ը)

Կազմված Թիֆլիսի քաղ. դումայի տնտես. մասնաժողովի և հատատված՝ Թիֆլիսի նահանգապետի կողմից մայիսի 2-ին

II

Ալիւր (Բօստովի Ջրաղացին.)։ Ալիւր (Սօլոգովի) երեք 000 քանակներով, պլոմբով, պուդը 3 ր. 25 կ., 1 ֆունտը 9 կ., մնացած նօլերը 5 պուդանոց քսակը 15 ր., 1 ֆ. 8 կ., I տեսակի 5 պուդ. քսակը 14 ր. 10 կ., 1 ֆ. $7\frac{1}{2}$ կ., II տես. 5 պ. քսակը 13 ր. 60 կ., III տես. 5 պ. քսակը 12 ր. 60 կ., IV տես. 5 պ. քս. 12 ր. 10 կ., V տես. 5 պ. քս. 11 ր. 85 կ., VI տես. 5 պ. քս. 11 ր. 35 կ., VII տես. 5 պ. քս. 10 ր. 10 կ., հաճարի ալիւրի պուդը մինչև 1 ր. 40 կոպէկ։

Ծանօթ. I.—Հիւս. Կովկասի Ջրաղացների ալիւրի բոլոր տեսակներն էլ իւրաքանչիւր 5 պուդանոց քսակի համար 45 կոպէկով աւելի արժեն Բօստովի ալիւրի դիմաց, բացառութեամբ Նեզլօբինկա-Կազչինօյի Ջրաղացի № 7 և 8 ալիւրի, որը գնահատվում է իւրաքանչիւր քսակի վրա 50 կ. աւելի հիւս. Կովկ. Ջրաղացների գների դիմաց։

Կարտօֆիլի ալիւրի ֆունտը մինչև 15 կ.։

Ծանօթ. II.— Սաօրև յիշված՝ Բօստովի Ջրաղացների ալիւրի տեսակների համար, որոնք գնված են Բօստովում այս տարվայ ապրիլի 16-ից յետոյ, երբ գները այդ տեսակների վրա աւելացված էին, թոյլատրվում է Թիֆլիսում այդ տեսակների իւրաքանչիւր 5 պուդ քսակի համար գները աւելացնել հետեւեալ սահմաններում. I տես. 14 ր. 25 կ., (1 ֆ. $7\frac{1}{2}$ կ.), II տես.՝ 13 ր. 75 կ., III տես.՝ 12 ր. 85 կ., IV տես.՝ 12 ր. 35 կ., V տես.՝ 12 ր. 10 կ., VI տես.՝ 11 ր. 60 կ., VII տես.՝ 10 ր. 35 կ., VIII տես.՝ 9 ր. 85 կոպէկ։

Կոր (Ֆուրաժ).—Գարու պուդը մինչև 1 ր. 15 կ., խառնը՝ մինչև 60 կ., դարմանինը՝ մինչև 50 կ., վարսակինը (овесъ) մինչև 1 ր. 10 կ., թեփինը՝ մինչև 1 ր., հեղի պուդը մինչև 1 ր. 35 կոպ.։

Ածուխներ.—Զոր ածուխ առանց խառնուրդի և աղբի՝ պահեստներում պուդը 55 կոպէկ։

Ծանօթ.—Սայլերով շրջեցվող ածուխը քսակներով պէտք է վաճառվի 20 ֆ. իւրաքանչիւր ունեցող չափով 35 կ., լեռներով ծախվող ածուխը, բացի կշիռով և չափով վաճառվելուց, կարող է փոխադրձ համաձայնութեամբ վաճառվել և առանց դրանց։

Դարբնոցի ածուխի պուդը 65 կ., քարածուխ Տկվիբուլի պ. 30 կ., անտրացիտ պ. 60 կ., կօքս պ. 65 կոպ.։

Փայտ.—Բոխի (граб.) տեղնուտեղը սաժ. 58 ր., չինարի տեղնուտեղը սաժ. 50 ր., խառը ամեն տեսակի տեղնուտեղը 54 ր., չոր փայտ կշիռով պուդը մինչև 30 կոպ.

Ծանօթ.— Փայտի պահեստ ունեցողները պարտաւոր են փայտը դարսել պահեստում կանոնաւոր և սեղմ կերպով առանց բացերի, $\frac{1}{2}$, $\frac{1}{4}$ և $\frac{1}{8}$ սաժէնամասերով։

Փայտը տան ուղարկելու համար գնողը վճարում է համաձայն Թիֆլիսում մշտապէս գոյութիւն ունեցող և հաստատված սակագնի *)։

*) Խորանարդ սաժ. փայտ կրելու համար սակագին։

1) Երկաթուղու փայտի պահեստից և վագոններով մինչև մաքսատան մօտի պահեստները բերված ու երկաթուղու մասերքը գանվող պաշկեաներից 3 ր. 50 կ., 2) X և IX քաղաքամ. բայօնում մինչև Վօրօնց. արձանը 4 ր., 3) Սօլդատսկ. Բազարի բայօնում 5 ր., 4) Երևան. հրապարակ 6 ր., 5) Բէբութօվ. փող. 7 ր., 6) Սօլօլակի հեռաւոր մասերը 7 ր., 7) Գօլօվինսկ. պրօսպ., Սլզինսկ. և մերձակայ մասերը 6 ր., 8) Հաւլաբար և Թիւրք. մէյդանի մասերը 8 ր., 9) Շան թաղը 8 ր., 10) Օրթաճալա 9 ր., 11) մինչև Զարգարեանի գործարանը 9 ր., 12) Պեսկի, Սամանդայա հրապարակից օչ հետաւ 5 ր. 50 կ., 13) Նաւթլուղ 10 ր., 14) մինչև ս. Դաւթի սարի սասրոանների վերջը 8 ր.։

Վերը յիշած երկու բայօնների պաշկաւերը տանելու վճարը որոշվում է աւելի հեռաւոր պաշկաների համար որոշվող նօրմայի համաձայն. սաժէնի մի մաս փայտը տանելու գինը պահասեցվում է համաձայն փայտի քանակի. մաքսատան մօտերքի փայտի պահեստներից տարվող փայտը քաղաքի գանձատան մասերը տանելու վճարը սաժէնի վրա 50 կ. պակաս է՝ երկաթուղային պահեստից նոյն մասերը տարվելու համար նշանակված գների դիմաց։

Վառառականների՝ ներկայ սակագնին հակառակ գնալու դէպքում բողոքելու և աշակցութիւն ստանալու համար պէտք է դիմել ոստիկանական պաշտօնեաներին կամ առևտրա-անտեսական պօլիցիայի հերթապահ գործակալներին (ագենտներին), նոյնպէս և մերձքների վրա հսկող մասնաժողովի նոյն բայօնի անդամին կամ քաղաք. ուղղավային (IV բաժանմունք)։

Մերձային մասնաժողովի անդամները քաղաքային դումայի ձայնատուներն են, որոնք և հսկում են առևտրի ու շուկաների վրա։

I քաղաքամասում Գ. Ս. Վասիլեվ, II և III քաղ.՝ Գ. Ն. Գէլլ և Մ. Ի. Մարաքրուսեան, IV և V քաղ.՝ Ա. Մ. Ցէրաէթով, VI և VII քաղ.՝ Ս. Մ. Նունուփարօվ, VIII և IX քաղ.՝ Ս. Ա. Մինէվ և X, XI և XII քաղ.՝ Ա. Գ. Կօբուլաշվիլի և Գ. Ի. Սօսին։

Առևտրա-անտեսական վերակացուների և գրասենեակների հասցէները։

I քաղաքամաս Վէրայի հր. քաղ. տուն։ II—III քաղ.՝ Գրաֆսկայա, տ. Խուրշուտովի։ IV V քաղ.՝ Թուրքաց մէյդան։ VI—VII քաղ.՝ Հաւլաբար, Կախետինսկ. հր. տ. Նունուփարօվի։ VIII—IX քաղ.՝ Ելիզավետինսկ. № 10, տուն Յարութիւնեանի։ X, XI—XII քաղ.՝ Շէրքէզովսկ. № 87 տ. Ասրիեվի։

Քաղ. վարչ. անդամ **Զաբար**

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԻՄՈՒՄ Ն

Որդիս՝ ԱՇՈՏ ՄԵԼԻՔՍԷԹԵԱՆ, 13 տարեկան, գիմնազիստ, առողջ կազմուածքով, հագած ունի պարտէսինէ ամարային ճերմակ բլուզ և սև գոյնի վարտիկ, տերին՝ չուստիկներ, գլխին՝ աշակերտական դդակ, ամսիս 10-ին, առաւօտ. ժամը 10-ին մնից դուրս գալով՝ մինչև այժմ չէ վերադարձել տուն։ Սրանով խնդրարկաբար խնդրում եմ յիշեալի մէր լինելը իմացողներին բարի լինել յայտնել ինձ հետեւեալ հասցէով՝ Թիֆլիս, Ելիզավետինսկայա փող. № 128, Իվան Մելիքսէթեանին։

309. 2—1

Դիլիջանում մայիսի 20-ին տեղի կունենայ բօստօղայի և շամօտի ԲՈՒՖԵՏՆԵՐԸ տարային սէզօնին կապակով տալու վերջնական

ԱՃՈՒՐԴԸ։

(ա. օ.) 285. 6—6

Ծախվում են

1) «ՎՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԳԱՂՏՆԻ ՑԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ» նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և բէչէտնի բոյ։ Ընհարաժէշտ գիրք և պարզ ու հասկանալի գրված ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նախազգուշութեան կանոններ արիպէրով և այլ ցուցերով չը վտանգվելու համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրօնիկական ռհիպէրի և բժշկութեան մասին, բէչէտներով։ Գինը 50 կոպ.։

2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՋԵՒՆ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տեսակ պատահական փորձանքները, հիւանդութիւնները։ թունաւորութիւնները և նրանց չուտափոյթ օգնելը, բազմաթիւ անային դեղը և խորհուրդներ։ Շատ պարզ ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժեշտ գիրք գրպանի համար, և ամեն մարդ կարող է մեծ օգնութիւն հասցնել թէ իրա և թէ ուրիշներին։ Գինը 30 կոպ.։

3) «ՔԻՉԱԳԻ ՑՂԱՐՈՒ» ամենալաւ և ծիծաղաշարժ աւելկոմների ու սրախօսութիւնների ժողովածու։ Ծիծաղաշարժ սկեցի պատկերը գրքի երեսին։ Գինը 20 կ.։

Այս երեք գիրքը միասին պահանջողներին

ԶՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻՐ ՆՈՒԷՐ

երեք հետեւեալ գրքերը. 1) «Կնիկարմատի չալմաբը» ծիծաղաշարժ վօդեվիլ չափահասների համար (գինն է 20 կ.), 2) «Բաֆֆին» պատկերով (գ. 10 կ.), 3) «Միհնոյն զազուռում», պատմուածք հայ-թուրքական կռիւներից, գիւղերի նկարներով, գինն է 7։

Գրքերի գինը և ճանապարհի ծախս 20 կոպ. առաջուց ուղարկել անպայման պէրէվօդով։ Մարկաներ չը դնել նամակներում, հակառակ դէպքում պատասխանատու չեմ ոչ մի կերպ։ Հասցէս՝ Тифлисъ. Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаянцу.

(հ.կ.) 311. 100—1

Լոյս տեսաւ և վաճառվում են

ՍԱ. Լ-ՄԱՆԻ

„ՀԱՅԱՋԳԻ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ“

Սերիայի հետեւեալ գրքերը. *Գինն է*

Գիրք I *Դեներալ-ադիւտանդ Մ. ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔԵԱՆ. Երկրորդ տպագր. Պատերազմի բեմի հերոսների նկարներով.* . . 40 կ.

Գիրք II *Դեներալ-ադիւտանդ ՅՈՎՀ. ԼԱԶԱՐԵԱՆ. Պատերազմի բեմի հերոսների նկարներով.* . . . . . 30 կ.

Գիրք III *Բայազէտի հերոս զեներալ-լէյտենանտ ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՂՈՒԿԱՍԵԱՆ.* . . . . . 35 կ.

Երեք գրքերը միասին՝ 1 րուբլի։

Ծախվում է բացառապէս հեղինակի մօտ. ուղարկվում է վերադիր վճարով։ Դիմել հետեւեալ հասցէով՝ Тифлисъ, Бебутовская ул. № 6. ВИРГИНІЙ АТАНАСЬЯНЦЪ.

(հ. կ.) 244. 12—7

ПРИ **ГОНОРРЕѢ**

(ТРИППЕРѢ)

въ острой и хронической формѣ, а также ея послѣдствіяхъ примѣняется средство

„АРМАТИНЪ“

для внутренняго употребленія. «Арматинъ» совершенно безвреденъ для организма и одинаково успѣшно примѣнимъ къ мужчинамъ и женщинамъ. При употребленіи «Арматина» не требуется никакихъ спринцеваній, промываній, прижиганій, бужированій и т. п. Курсъ леченія около 6 кор.

Цѣна 1 кор. „Арматинъ“ 1 р. 75 к.

Продажа въ аптекахъ и антекарскихъ магазинахъ.

ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ:

Исключительный успѣхъ, выпавшій на долю препарата «Арматинъ» А. Я. Акуліанца, вызвалъ на рынкѣ разнаго рода грубыхъ и вредныхъ для организма поддѣлокъ, а потому просятъ господъ покупателей быть особенно осторожными при покупкѣ и требовать «Арматинъ» только А. Я. Акуліанца съ этикетомъ бѣлая ромашка.

(հ. կ.) 174. 0—15

Розыгрышъ билетовъ ВЫСОЧАЙШЕ разрѣшенной благотворительной лотереи 1914 года въ пользу раненыхъ и больныхъ воиновъ, семей лицъ, призванныхъ на войну, и лицъ, пострадавшихъ отъ военныхъ дѣйствій, **будетъ производиться публично, въ Петроградѣ, въ помѣщеніи гимназіи Императора Александра I** (Казанская ул., 27) Совѣтомъ Государственнаго Банка, въ присутствіи одного изъ членовъ Комитета лотереи и депутатовъ отъ Петроградскихъ: дворянства, губернскаго земскаго собранія и городского общественнаго управленія.

Розыгрышъ билетовъ I-го выпуска (зеленыхъ) начнется 1 іюня с. г., а билетовъ 2-го выпуска (розовыхъ)—20-го іюня с. г.

Продажа билетовъ прекращается всюду 15-го Мая с. г., за исключеніемъ конторъ и отдѣленій Государственнаго Банка и казначействъ, гдѣ билеты обоихъ выпусковъ будутъ продаваться **съ 15-го Мая по 27-е Мая с. г.,** включительно.

Цѣна билета—5 р., а одной пятой части билета—1 р.

Выигрыши—отъ 100,000 р. до 200 р.

Всего выигрышей 8,668 на сумму 3.000,000 р.

312. 2—1

ՀՐԱՒԷՐ

Հինգշաբթի, երեկոյեան ժամը 8-ին, մայիսի 14-ին 1915 թ. Քամոյեան—ս. Գէորգ եկեղեցում նշանակված է ծիսական տարեկան ընդհանուր ժողով։

Զբաղմունքի առարկաներն են

1) Եկեղեցապատական կրպակների վերաշինութեան հարցը։

2) 1914 թ. տարեկան հաշիւ քննութիւն։

3) 1915 թ. նախահաշիւ քննութիւն։

4) Չեկուցում Վերաատուգիչ Յանձնաժողովի։

5) Վերաատուգիչ Յանձնաժողովի 1 անդամի ընտրութիւն։

Քամոյեան—ս. Գէորգ եկ. Հոգաբարձութիւն

ԾԱՆՈՒՕՑ.—Որ 6-րդ ժողովը լինելով ցանկալի է, որ ծխականները բաւականին գալ ժողովի, որպէսզի ժողովները չարաւնակ յետաձգելով աւելորդ ծախքերի տեղիք չը տրվին։

(ա. օ.) 300. 3—3

Ծախվում են

Ալիւր (Բօստովի Ջրաղացին.)։ Ալիւր (Սօլոգովի) երեք 000 քանակներով, պլոմբով, պուդը 3 ր. 25 կ., 1 ֆունտը 9 կ., մնացած նօլերը 5 պուդանոց քսակը 15 ր., 1 ֆ. 8 կ., I տեսակի 5 պուդ. քսակը 14 ր. 10 կ., 1 ֆ. $7\frac{1}{2}$ կ., II տես. 5 պ. քսակը 13 ր. 60 կ., III տես. 5 պ. քսակը 12 ր. 60 կ., IV տես. 5 պ. քս. 12 ր. 10 կ., V տես. 5 պ. քս. 11 ր. 85 կ., VI տես. 5 պ. քս. 11 ր. 35 կ., VII տես. 5 պ. քս. 10 ր. 10 կ., հաճարի ալիւրի պուդը մինչև 1 ր. 40 կոպէկ։

Ծանօթ. I.—Հիւս. Կովկասի Ջրաղացների ալիւրի բոլոր տեսակներն էլ իւրաքանչիւր 5 պուդանոց քսակի համար 45 կոպէկով աւելի արժեն Բօստովի ալիւրի դիմաց, բացառութեամբ Նեզլօբինկա-Կազչինօյի Ջրաղացի № 7 և 8 ալիւրի, որը գնահատվում է իւրաքանչիւր քսակի վրա 50 կ. աւելի հիւս. Կովկ. Ջրաղացների գների դիմաց։

Կարտօֆիլի ալիւրի ֆունտը մինչև 15 կ.։

Ծանօթ. II.— Սաօրև յիշված՝ Բօստովի Ջրաղացների ալիւրի տեսակների համար, որոնք գնված են Բօստովում այս տարվայ ապրիլի 16-ից յետոյ, երբ գները այդ տեսակների վրա աւելացված էին, թոյլատրվում է Թիֆլիսում այդ տեսակների իւրաքանչիւր 5 պուդ քսակի համար գները աւելացնել հետեւեալ սահմաններում. I տես. 14 ր. 25 կ., (1 ֆ. $7\frac{1}{2}$ կ.), II տես.՝ 13 ր. 75 կ., III տես.՝ 12 ր. 85 կ., IV տես.՝ 12 ր. 35 կ., V տես.՝ 12 ր. 10 կ., VI տես.՝ 11 ր. 60 կ., VII տես.՝ 10 ր. 35 կ., VIII տես.՝ 9 ր. 85 կոպէկ։

Կոր (Ֆուրաժ).—Գարու պուդը մինչև 1 ր. 15 կ., խառնը՝ մինչև 60 կ., դարմանինը՝ մինչև 50 կ., վարսակինը (овесъ) մինչև 1 ր. 10 կ., թեփինը՝ մինչև 1 ր., հեղի պուդը մինչև 1 ր. 35 կոպ.։

Ածուխներ.—Զոր ածուխ առանց խառնուրդի և աղբի՝ պահեստներում պուդը 55 կոպէկ։

Ծանօթ.—Սայլերով շրջեցվող ածուխը քսակներով պէտք է վաճառվի 20 ֆ. իւրաքանչիւր ունեցող չափով 35 կ., լեռներով ծախվող ածուխը, բացի կշիռով և չափով վաճառվելուց, կարող է փոխադրձ համաձայնութեամբ վաճառվել և առանց դրանց։

Դարբնոցի ածուխի պուդը 65 կ., քարածուխ Տկվիբուլի պ. 30 կ., անտրացիտ պ. 60 կ., կօքս պ. 65 կոպ.։

Փայտ.—Բոխի (граб.) տեղնուտեղը սաժ. 58 ր., չինարի տեղնուտեղը սաժ. 50 ր., խառը ամեն տեսակի տեղնուտեղը 54 ր., չոր փայտ կշիռով պուդը մինչև 30 կոպ.

Ծանօթ.— Փայտի պահեստ ունեցողները պարտաւոր են փայտը դարսել պահեստում կանոնաւոր և սեղմ կերպով առանց բացերի, $\frac{1}{2}$, $\frac{1}{4}$ և $\frac{1}{8}$ սաժէնամասերով։

Փայտը տան ուղարկելու համար գնողը վճարում է համաձայն Թիֆլիսում մշտապէս գոյութիւն ունեցող և հաստատված սակագնի *)։

*) Խորանարդ սաժ. փայտ կրելու համար սակագին։

1) Երկաթուղու փայտի պահեստից և վագոններով մինչև մաքսատան մօտի պահեստները բերված ու երկաթուղու մասերքը գանվող պաշկեաներից 3 ր. 50 կ., 2) X և IX քաղաքամ. բայօնում մինչև Վօրօնց. արձանը 4 ր., 3) Սօլդատսկ. Բազարի բայօնում 5 ր., 4) Երևան. հրապարակ 6 ր., 5) Բէբութօվ. փող. 7 ր., 6) Սօլօլակի հեռաւոր մասերը 7 ր., 7) Գօլօվինսկ. պրօսպ., Սլզինսկ. և մերձակայ մասերը 6 ր., 8) Հաւլաբար և Թիւրք. մէյդանի մասերը 8 ր., 9) Շան թաղը 8 ր., 10) Օրթաճալա 9 ր., 11) մինչև Զարգարեանի գործարանը 9 ր., 12) Պեսկի, Սամանդայա հրապարակից օչ հետաւ 5 ր. 50 կ., 13) Նաւթլուղ 10 ր., 14) մինչև ս. Դաւթի սարի սասրոանների վերջը 8 ր.։

Վերը յիշած երկու բայօնների պաշկաւերը տանելու վճարը որոշվում է աւելի հեռաւոր պաշկաների համար որոշվող նօրմայի համաձայն. սաժէնի մի մաս փայտը տանելու գինը պահասեցվում է համաձայն փայտի քանակի. մաքսատան մօտերքի փայտի պահեստներից տարվող փայտը քաղաքի գանձատան մասերը տանելու վճարը սաժէնի վրա 50 կ. պակաս է՝ երկաթուղային պահեստից նոյն մասերը տարվելու համար նշանակված գների դիմաց։

Վառառականների՝ ներկայ սակագնին հակառակ գնալու դէպքում բողոքելու և աշակցութիւն ստանալու համար պէտք է դիմել ոստիկանական պաշտօնեաներին կամ առևտրա-անտեսական պօլիցիայի հերթապահ գործակալներին (ագենտներին), նոյնպէս և մերձքների վրա հսկող մասնաժողովի նոյն բայօնի անդամին կամ քաղաք. ուղղավային (IV բաժանմունք)։

Մերձային մասնաժողովի անդամները քաղաքային դումայի ձայնատուներն են, որոնք և հսկում են առևտրի ու շուկաների վրա։

I քաղաքամասում Գ. Ս. Վասիլեվ, II և III քաղ.՝ Գ. Ն. Գէլլ և Մ. Ի. Մարաքրուսեան, IV և V քաղ.՝ Ա. Մ. Ցէրաէթով, VI և VII քաղ.՝ Ս. Մ. Նունուփարօվ, VIII և IX քաղ.՝ Ս. Ա. Մինէվ և X, XI և XII քաղ.՝ Ա. Գ. Կօբուլաշվիլի և Գ. Ի. Սօսին։

Առևտրա-անտեսական վերակացուների և գրասենեակների հասցէները։

I քաղաքամաս Վէրայի հր. քաղ. տուն։ II—III քաղ.՝ Գրաֆսկայա, տ. Խուրշուտովի։ IV V քաղ.՝ Թուրքաց մէյդան։ VI—VII քաղ.՝ Հաւլաբար, Կախետինսկ. հր. տ. Նունուփարօվի։ VIII—IX քաղ.՝ Ելիզավետինսկ. № 10, տուն Յարութիւնեանի։ X, XI—XII քաղ.՝ Շէրքէզովսկ. № 87 տ. Ասրիեվի։

Քաղ. վարչ. անդամ **Զաբար**

„Մշակի“ խմբագրատունը վաճառվում են

ՀԵՏԵՒԵԱԼ ԹԱՍԵՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ.

1) Հասարակութեան նեցուկները, Հ. Իսրէնի, Թարգ. Լ. Բաթայեանի 50 կ.

2) Նոր կեանքի շեմքում, դրամ.-էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Ռ-ի 40 կ.

3) Նշանվածներ, պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի . . . . . 60 կ.

4) Ուսանողներ, 3 գործ., Գ. Բաշինջաղեանի . . . . . 50 կ.

5) Կայէնի ճանկերում, դրամա 5 գործ. Ա. Առաքելեանի . . . 50 կ.

6) Մազրա, դրամա, 5 գործ. Լևոն Մանուէլեանի . . . . . 40 կ.

Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրնակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վնարելով, կը ստանան 25% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին կը լինի միայն 15%։

Հասցէն՝ Ред. газ. „Мшакъ“, Тифлисъ.

(3) 0—7

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԻՆԺԵՆԵՐ

Տ.Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ

Բագու, Կրասնօվօդսկայա փ. տ. Աւան-Ղազարեանցի։ Հեռախօս № № 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար խնամքով Դիզել շարժիչներ (մօտօրներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։

Հօրիզոնական անգլիական շարժիչներ, (մօտօրներ) «ԿՐՕՍՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւբացրած Դիզել» սիստեմի, որ գործ է տալիս նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ձիժին $\frac{1}{2}$ ֆունտ կամ 200 գրամմ։

Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գենեռատորային գազով։

Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։

Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։

Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէյնիկս» ընկ. գործարանից։

Ամեն տեսակ էլեքտրական մեքենաներ և պլատքներ յայտնի «Դինամօ» ընկ. գործարանից։

Երկրագործական մեքենաներ՝ լօկօմօբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրաքտօրներ և այլն՝ յայտնի ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։

Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում գանազան գործարաններ տարբել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։

Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.

Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur

(հ.կ.) 551. 150—96

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный